

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՈՎԵՍՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՊԱՌՄԱՆ ԵՎ
ԿՈՒՏԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԹՄԱՆ ՄԱՍԻՆ

Ն. Մ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Տնտեսական համահարթման պրոբլեմը բազմակողմանի է և պարունակում է գյուղի և քաղաքի միջև սոցիալ-տնտեսական հարաբերությունների, սոցիալիստական սեփականության երկու ձևերի միջև հարաբերությունների, բնատնտեսական տարբեր գոտիներում աշխատող ձեռնարկությունների վերարտադրության տնտեսական պայմանների համահարթման և մի շարք այլ հարցեր: Այդ պրոցեսը միանման չէ արդյունաբերության և գյուղատնտեսության համար: Չնայած համահարթումը ընդհանուր օրինաչափություն է ամբողջ ժողովրդական տնտեսության համար, այն ավելի ցայտուն է դրսևորվում արդյունաբերության մեջ: Դա պատահական չէ, քանի որ արդյունաբերությունն է ստեղծում համահարթման պրոբլեմի լուծման համար անհրաժեշտ նյութական պայմաններ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա այդ ճյուղի զարգացման վճռական պայմաններից մեկն ամենից առաջ արդյունաբերության զարգացումն է, առանց որի անհնար է գյուղատնտեսական արտադրության ժամանակակից նյութատեխնիկական բազիսի ստեղծումը: Միաժամանակ, արդյունաբերության զարգացման բարձր տեմպերի ապահովումը բնատնտեսական տարբեր գոտիներում աշխատող ձեռնարկությունների համար վերարտադրության հավասար պայմանների ստեղծման առավել կարևոր գործոններից մեկն է:

Վերարտադրության պայմանների համահարթման պրոբլեմի կարևորագույն կողմերից մեկը աշխատուժի զբաղվածության, վարձատրության և հիմնական ֆոնդերի կուտակման ասպարեզում այն զգալի տարբերությունների հաղթահարումն է, որ գոյություն ունեն կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների միջև:

Նախ նկատենք, որ համահարթման պրոբլեմը միանման չէ կոլտնտեսությունների և սովխոզների համար: Իհարկե, բնական պայմաններն իրենց ազդեցությունն են թողնում ինչպես կոլտնտեսությունների, այնպես էլ սովխոզների տնտեսական գործունեության վերջնական արդյունքի վրա: Դրա հետևանքով էլ գյուղատնտեսական կուտուրանների բերքատվության և միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի տեսակետից տարբեր գոտիներում գործող սովխոզների միջև եղած տարբերությունները կամ շերտավորումը ավելի պահպան չեն, քան կոլտնտեսությունների միջև: Սակայն քանի որ սովխոզներն աչքի են ընկնում արտադրության և բաշխման հանրայնացման ավելի բարձր մակարդակով, ապա դա հնարավորություն է տալիս հասարակությանը (պետությանը), կենտրոնացված կարգով լուծելու սովխոզային էկոնոմիկայի զարգացման այնպիսի հիմնական հարցեր, ինչպիսիք են, օրինակ, կուտակում-

ների շարքը, շահութան հաշիվները, աշխատանքի վարձատրություն մակարդակը և այլն ու զրանով իսկ որոշ շահով վերացնել բնական պայմանների ազդեցությունը տարբեր տնտեսությունների զարգացման մակարդակի վրա:

Սեփականության կոլտնտեսային ձևը առանձին տնտեսություններին համեմատաբար ավելի շատ խնայողություն է տալիս վերոհիշյալ հարցերի լուծման ռեսուրսներում: Միևնույն ժամանակ քանի որ կոլտնտեսություններն ի սկզբանե տնտեսավարկային ձևերից են, ապա նրանց էկոնոմիկան զգալիորեն ավելի մեծ շահով է կախված բնական պայմաններից, որոնք անմիջապես անդրադառնում են հանրային ֆոնդերի ընդլայնված վերաբաշխման և կոլտնտեսականների կենսամակարդակի բարձրացման հնարավորությունների վրա: Այդ է պատճառը, որ գյուղատնտեսական տարբեր գոտիներում աշխատող կոլտնտեսությունների տնտեսական զարգացման մակարդակների միջև գոյություն ունեն այնպիսի զգալի տարբերություններ, որպեսզի սովորաբար չենք տեսնում սովխոզների միջև:

Այստեղ հարկ է նկատել, որ սովխոզներում տնտեսավարկի կիրառումով իրադրությունն ակնհայտորեն պետք է որ փոխվի: Տնտեսավարկ կիրառող ընտանիքները սովխոզ պետք է հասնի այն բանին, որ վերաբաշխողություն իրականացնի սեփական միջոցների հաշվին: Այդ նպատակին հասնելու համար սովխոզներին պետք է թողնվի նրանցում ստեղծված զուտ եկամուտի զգալիորեն ավելի մեծ մասը, քան այժմ է թողնվում: Այստեղից հետևում է, որ տնտեսավարկային մեխանիզմի կատարելագործման և մասնավորապես ռենտային եկամուտների բաշխման ու վերաբաշխման մեխանիզմի հարցերը, որոնք վաղուց արդեն դրված են կոլտնտեսային սեկտորի նկատմամբ, մոտ ապագայում ավելի ու ավելի առօրյա նշանակություն պետք է ստանան նաև սովխոզային սեկտորի նկատմամբ:

ՍՄԿԿ Ծրագրում համահարթումը ձևակերպված է իբրև սպեցիֆիկ կոլտնտեսային պլուրալիզմ¹, պայմանավորված կոլտնտեսային սեկտորի այն վճարական դերով, որ նա ունեցել է և ունի երկրի գյուղատնտեսական արտադրության հաշվեկշռում:

ՍՄԿԿ Ծրագրի ընդունումից հետո ընկած կարճ ժամանակաշրջանի ընթացքում մեր էտպրում կատարվել են այնպիսի տեղաշարժեր, որոնք այժմ պահանջում են բնութագրել համահարթման պլուրալիզմ իբրև ընդհանուր ոչ միայն կոլտնտեսային, այլև սովխոզային սեկտորի համար:

Ամենից առաջ, վերջին տասնամյակի ընթացքում զգալիորեն ավելացել է սովխոզային սեկտորի դերը երկրի գյուղատնտեսության տնտեսական պատեկային մեջ: Սովխոզների ընդհանուր թիվը 1960—1973 թթ. 7,4 հազարից հասել է 17,3 հազարի: Եթե 1960 թ. երկրի սովխոզներում կար 6,3 միլիոն միջին տարեկան աշխատող, որը կազմում էր գյուղատնտեսության մեջ զբաղված բոլոր աշխատողների հազիվ 20%-ը, ապա 1973 թ. սովխոզներում աշխատում էր արդեն 10,5 միլիոն մարդ, կամ գյուղատնտեսության մեջ զբաղ-

¹ Ռենտաբեռն է ապահովել եկամուտների բարձրացման ավելի ու ավելի հավասար տնտեսական պայմանների ստեղծում տարբեր գոտիներում, ինչպես նաև առանձին գոտիների ներսում բնատնտեսական անհավասար պայմաններում գտնվող կոլտնտեսությունների համար, այն հաշվով, որ ավելի հետևողականորեն իրագործվի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը կոլտնտեսային ամբողջ սիստեմի մասշտաբով (ՍՄԿԿ Ծրագիրը, Երևան, 1969, էջ 99):

վածների 37,2%-ը: Սովխոզներն ունեն ավելի շատ վարելահողեր և մանավանդ խոտհարքներ ու արոտավայրեր, քան կոլտնտեսությունները, իսկ ընդհանուր առմամբ սովխոզների բոլոր հողատարածությունները 1,7 անգամ դելազանցում են կոլտնտեսությունների հողատարածություններին: Կոլտնտեսությունների թիվը նշված ժամանակաշրջանում կրճատվել է 44,9 հազարից մինչև 31,4 հազար, իսկ կոլտնտեսականների միջին տարեկան թիվը՝ համապատասխանաբար 22,3 միլիոնից մինչև 16,1 միլիոն մարդ: Այսօրվա վիճակով կոլտնտեսությունները տալիս են երկրի գյուղատնտեսական համախառն արտադրանքի շուրջ 40%-ը, սովխոզները՝ 30,4%-ը (մնացած 29,6%-ը բաժին է ընկնում կոլտնտեսականների և սովխոզների բանվոր-ծառայողների անձնական օժանդակ տնտեսությունը)²:

Սովխոզային սեկտորի այս տարածքային կամ քանակական ընդլայնման հետ մեկտեղ զգալի տեղաշարժեր են կատարվում նաև նրանց վերարտադրության տնտեսական պայմանների ասպարեզում: Ինչպես արդեն նկատեցինք, կոլտնտեսություններն ի սկզբանե աշխատել են տնտհաշվարկի և ետզնման սկզբունքներով, ինչ վերաբերում է սովխոզներին, ապա դրանցից շատերը մինչև այսօր էլ աշխատում են պետական բյուջետային ֆինանսավորման օգնությամբ: Սովխոզներում տնտհաշվարկի իրագործումը մինչև վերջերս էլ հիմնականում ձևական բնույթ է կրել, իսկ վերարտադրության գրեթե բոլոր պրոբլեմները լուծվել են վերևից՝ վարչական եղանակով:

Սովխոզներում իրական տնտհաշվարկի ռեֆորմի կիրառումը մեր երկրում կենսագործվող տնտեսական ռեֆորմի կարևորագույն բաղկացուցիչ օղակներից մեկն է: Տնտեսական համահարթման պրոբլեմն առնչվում է ամենից առաջ գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական ֆոնդերի և աշխատուժի վերարտադրության ասպարեզում գոյություն ունեցող զգալի տարբերությունների հաղթահարման հետ: Դրան համապատասխան նպատակահարմար է անդրադառնալ քննվող պրոբլեմի հետևյալ երկու կողմերին. ամենից առաջ կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատանքի վարձատրության, այսինքն՝ առաջին տնտեսության շահութաբերության և կուտակումների հարցերին: Այժմ բերենք մի քանի տվյալներ, որոնք բնութագրում են երկրի և մեր հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատավորների զբաղվածության և աշխատանքի վարձատրության մակարդակը (տե՛ս աղյուսակ 1):

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսության մեջ (սովխոզներում) բանվորների միջին ամսական աշխատավարձը 1974 թ. կազմում էր արդյունաբերական բանվորի միջին աշխատավարձի շուրջ 80%-ը, մինչդեռ 1960 թ. այն կազմում էր միայն 58,1%-ը: Նշված ժամանակամիջոցում զգալի փոփոխության է ենթարկվել նաև կոլտնտեսականների և սովխոզային բանվորների վարձատրության մակարդակների հարաբերությունը: Ինչպես երևում է նույն աղյուսակից, կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը զգալիորեն աճելի բարձր տեմպերով է աճել, քան սովխոզային բանվորներինը: Դրա հետևանքով էլ, եթե 1960 թ. ՍՍՀՄ-ում մեկ կոլտնտեսականի միջին ամսական

² «Народное хозяйство СССР в 1965 г.», стр. 257, 435; «Народное хозяйство СССР в 1973 г.», стр. 341, 343, 374, 456, 469, 476.

Ջրադժվածությունը և աշխատանքի վարձատրությունը
զյուղատնտեսության մեջ³

Ցուցանիշներ	ՍՍՀՄ-ում			Հայկական ՍՍՀ-ում		
	1960 թ.	1974 թ.	1974-1960 թթ. -ով	1980 թ.	1974 թ.	1974-1960 թթ. -ով
1 Աշխատանքի միջին ամսական վարձատրությունը արդյունաբերության մեջ, ռուբ.	91,6	155,5	169,8	81,4	152,3	187,1
Առվտոգնություն						
2 Մեկ մարդ-օրվա վարձատրությունը, ռուբ.	2,31	5,42	294,5	2,21	4,40	199,1
3 Վաստակած մարդ-օրերը միջին տարեկան մեկ աշխատողի հաշվով	280	276	98,3	270	246	91,1
4 Միջին ամսական վաստակը, ռուբ.	53,2	125	235,0	49,7	90,3	181,7
Կուտնտեսություններում						
5 Մեկ մարդ-օրվա վարձատրությունը, ռուբ.	1,40	4,50	321,4	1,67	4,64	277,8
նույնը, սովխոզային մակարդակի նկատմամբ, %-ով	60,6	83,0	—	74,2	105,5	—
6 Միջին տարեկան մեկ կուտնտեսականի հաշվով վաստակած մարդ-օրերի քանակը	244	242	99,2	235	255	108,5
7 Նրա միջին ամսական վարձատրությունը, ռուբ.	28,4	90,7	319,4	32,6	98,5	302,1
նույնը սովխոզայինի համեմատ, %-ով	53,4	72,6	—	65,5	109,1	—
8 Մեկ աշխատունակ կուտնտեսականի վաստակած մարդ-օրերը	տեղեկություն չկա			182	173	95,1
9 Նրա միջին ամսական վարձատրությունը, ռուբ.	-	-	-	25,3	66,9	264,4
նույնը սովխոզայինի համեմատ, %-ով	-	-	-	50,9	74,1	—

վաստակը կադմուս էր սովխոզային բանվորի վարձատրության կեսից քիչ ավելին, այսինքն 1974 թ.՝ 72,6%-ը:

Աչքի է ընկնում նաև աշխատանքի վարձատրության հետևյալ առանձնահատկությունը կուտնտեսություններում և սովխոզներում: Մեկ մարդ-օրվա վարձատրության չափի տեսակետից կուտնտեսությունները զգալիորեն ավելի

³ Հաշվարկը կատարել ենք ըստ «Народное хозяйство СССР в 1972 году», стр. 389, 399, 516; «Народное хозяйство СССР в 1974 году», стр. 422, 443, 562; «Народное хозяйство Армянской ССР в 1968 году», стр. 26; «Народное хозяйство Армянской ССР в 1974 году», стр. 154 վիճակագրական ժողովածուների, ինչպես նաև հանրապետության կուտնտեսությունների և սովխոզների տարեկան ամփոփ հաշվետվությունների տվյալների:

Ափսոսանքով պետք է նշել, որ հրապարակվող վիճակագրական ժողովածուներում տեղեկություններ են տրվում միայն կուտնտեսականների միջին տարեկան թվի վերաբերյալ և այդպիսի բացակայում են տնտեսության մեջ փաստորեն զբաղված աշխատունակ կուտնտեսականների թվի վերաբերյալ, որի պատճառով և ՍՍՀՄ կուտնտեսությունների մասին համապատասխան տողերը աղյուսակում բացակայում են:

մոտ են սովխոզային մակարդակին, քան միջին ամսական վաստակի չափի տեսակետից: Այսպես օրինակ, երկրի կոլտնտեսություններում մեկ մարդ-օրվա հասանելիքը 1974 թ. կազմում էր սովխոզային մակարդակի 83%-ը, մինչդեռ միջին ամսական վաստակի տեսակետից կոլտնտեսությունները հասել էին սովխոզային մակարդակի միայն 72,6%-ին: Ինչո՞ւ է բացատրվում կոլտնտեսություններում միջին ամսական վաստակի հարաբերական ետ մնալը մեկ մարդ-օրվա վաստակի համեմատ: Իհարկե, միայն նրանով, որ նշված ժամանակաշրջանում տեղի է ունեցել կոլտնտեսություններում զբաղ-վածության մակարդակի նվազում, որն արտահայտվում է մեկ աշխատողին ընկնող (կամ վաստակած) մարդ-օրերի քանակով:

Զբաղվածության պրոբլեմը տարբեր նշանակություն ունի կոլտնտեսու-թյունների և պետական տնտեսությունների համար: Վերջիններում, ինչպես հայտնի է, արտադրությունում զբաղվածների թիվը որոշվում է աշխատուժի նկատմամբ տվյալ տնտեսության պահանջով, միաժամանակ հաշվի առնելով գյուղատնտեսական մեքենաների քանակը, հողակլիմայական պայմանները և այլն: Ավելորդ աշխատողներին սովխոզը չի պահում: Մինչդեռ կոլտնտեսությունների սոցիալական բնույթը դա թույլ չի տալիս: Կոլտնտեսությունների հանրային տնտեսությունում զբաղված է այնքան աշխատավոր ձեռք, որքան փաստացի առկա է, ընդ որում՝ կոլտնտեսությունը պարտավոր է աշխատանքով ապահովել իր բոլոր աշխատունակ անդամներին: Այստեղ հաճախ կարելի է հանդիպել աշխատանքային ռեսուրսների ավելցուկի՝ նրանց պահանջարկի համեմատ: Դրան պետք է ավելացնել, որ սովխոզներում աշխատանքի ֆոնդազինվածության և մեքենայացման մակարդակը զգալիորեն ավելի բարձր է, քան կոլտնտեսություններում: Այս բոլորի հետևանքով էլ սովխոզներում մեկ աշխատողի զբաղվածության մակարդակը որպես կանոն զգալիորեն ավելի բարձր է, քան կոլտնտեսություններում: Դա որոշ չափով իր արտահայտությունն է գտել նաև վերը բերված աղյուսակում: Բանն այն է, որ աղյուսակում, ինչպես նաև վիճակագրական բոլոր աղբյուրներում աշխատանքի վարձատրության և զբաղվածության ցուցանիշները հաշվարկված են այսպես կոչված միջին տարեկան աշխատողի հաշվով: Մինչդեռ, եթե սովխոզներում այդ վիճակագրական հասկացությունն արտացոլում է զբաղ-վածության իրական վիճակը, ապա կոլտնտեսությունում այն զգալի չափով պայմանական բնույթ է կրում: Կոլտնտեսություններում ավելի ռեալ և իրա-կան ցուցանիշ պետք է համարել աշխատանքի վարձատրության և զբաղվածության ցուցանիշները՝ մեկ զբաղված աշխատող կոլտնտեսականի հաշվով:

Անվաճից հետևում է նաև, որ մեկ մարդ-օրվա հավասար վարձատրու-թյան ապահովումը կոլտնտեսություններում և սովխոզներում բնավ չի նշա-նակում, որ նրանցում գոյություն ունի աշխատանքի հավասար վարձատրու-թյուն, եթե, ընդամին, չի ապահովված մեկ կոլտնտեսականի և սովխոզի մեկ բանվորի հավասար աշխատանքային զբաղվածությունը: Քանի որ ներկայումս այս վերջին պայմանն անհնար է իրագործել, ապա և կոլտնտեսություններում ու սովխոզներում հավասար վարձատրության սկզբունքի ապահովումը որո-շակի դժվարությունների է հանդիպում: Քանի որ կոլտնտեսականների զբաղ-վածությունը ներկայումս ավելի ցածր է, քան սովխոզների բանվորներինը, ապա և հավասար վարձատրության ապահովումը կարծես թե պահանջում է

կոլտնտեսություններում ապահովել մեկ մարդ-օրվա համեմատաբար ավելի բարձր վարձատրություն՝ սովխոզայինի համեմատ:

1974 թ. ՍՍՀՄ կոլտնտեսություններում մեկ մարդ-օրվա միջին վարձատրությունը կազմում էր 4,50 ռ. և զգալի մոտեցել է սովխոզների վարձատրության մակարդակին: ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների համաձայն, 9-րդ հնգամյակի վերջում կոլտնտեսականների միջին ամսական վարձատրությունը հասցվելու էր 97—98 ռ., իսկ դա իր հերթին պահանջում է կոլտնտեսականների այսօրվա զբաղվածության պայմաններում, որը կազմում է ամսական 19—20 մարդ-օր (տես աղյուսակ 1), ապահովել շուրջ 5 ռ. մեկ մարդ-օրվա հաշվով:

Համեմատության համար նշենք, որ 1973 թ. տվյալներով երկրի կոլտնտեսությունների 39% -ը միջին հաշվով մեկ մարդ-օրը վարձատրել են 4 ռ. ավելի, այդ թվում 3900 կոլտնտեսություններում՝ 5 ռ. ավելի: Այս վերջին խումբ կոլտնտեսությունները կազմում են երկրի բոլոր կոլտնտեսությունների ընդամենը 12,1% -ը: Իսկ վկայում է այն մասին, որ 9-րդ հնգամյակի առաջադրանքները տվյալ ասպարեզում բավական լարված են եղել, չնայած 100 ռ. միջին ամսական վաստակի ապահովումը բավական համեստ խնդիր է:

Աշխատողների զբաղվածության և աշխատանքի վարձատրության ցուցանիշների վերլուծությունը մեր հանրապետության գյուղատնտեսական ձեռնարկություններում բացահայտում է նույն տենդենցները և հարաբերությունները կոլտնտեսությունների և սովխոզների միջև, ինչ նշվեց վերևում: Ընդ որում, կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրության ավելացման ավելի բարձր տեմպերի շնորհիվ աշխատանքի միջին ամսական վարձատրությունը դեռևս չափով մոտեցել է սովխոզային մակարդակին, իսկ մարդ-օրվա միջին վարձատրության առումով նույնիսկ գերազանցել է այդ մակարդակը:

Մյուս կողմից, այդ վերլուծությունը դարձյալ հաստատում է այն թեզը, որ միջին տարեկան կոլտնտեսական հասկացությունը զգալի չափով պայմանական նշանակություն ունի արտադրության մեջ զբաղված մեկ աշխատունակ կոլտնտեսականի համեմատ: Եվ իսկապես, վերը բերված աղյուսակի 6-րդ տողը վկայում է այն մասին, որ միջին տարեկան կոլտնտեսականի զբաղվածությունը Հայկական ՍՍՀ-ում 1960—1974 թթ. կարծես թե ավելացել է 8—9% -ով և նույնիսկ գերազանցում է սովխոզի բանվորի միջին զբաղվածությունը: Ինչ խոսք, որ դա անհավանական է, չնայած և շատ ցանկալի: Եթե հաշվի առնենք, որ ինչպես ողջ երկրի, այնպես էլ մեր հանրապետության սովխոզներում տեղի է ունենում զբաղվածության կրճատում, ապա հազիվ թե կոլտնտեսություններում այն հակառակ պատկերն ունենա: Մեր կարծիքով, ավելի իրական պետք է համարել հանրային տնտեսության մեջ զբաղված մեկ կոլտնտեսականի հաշվով մարդ-օրերի վաստակը (տես աղյուսակ 1-ի 8-րդ տողը), որը ցույց է տալիս զբաղվածության նկատելի նվազումը հանրապետության կոլտնտեսություններում:

Ասածից պարզ է, որ այսպես կոչված միջին տարեկան կոլտնտեսականի ցուցանիշը աղավաղում է իրերի իսկական պատկերը և թաքցնում կոլտնտեսային սեկտորում գոյություն ունեցող զբաղվածության լուրջ պրոբլեմը:

Աշխատանքի վարձատրությունը բնութագրելու համար մենք նույնպես ավելի օբյեկտիվ և իրական ենք համարում հանրային տնտեսության մեջ զբաղված մեկ աշխատունակ կոլտնտեսականի միջին մասական վարձատրությունը (և ոչ թե մեկ պայմանական միջին տարեկան կոլտնտեսականի հաշվով): Ինչպես երևում է աղյուսակից, եթե 1960 թ. այդ ցուցանիշի գծով հանրապետության կոլտնտեսականները հասել էին սովխոզային վարձատրության 51%-ին, ապա ներկայումս այն կազմում է 74,1%:

Կոլտնտեսությունների և սովխոզների միջին տարեկան աշխատողի ցուցանիշի մեջ նկատվող այս հակասությունը ոչ թե վիճակագրական հաշվարկների սխալ մեթոդիկայի կամ եղանակի արդյունք է, այլ արտացոլում է տնտեսական կյանքի ունեցող հակասությունը:

Մյուս ոչ կտրուկ հակասությունը ճետեյալն է: Ինչպես արդեն նշվեց, կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրության միջին մակարդակը վերջին տարիներին ընդհուպ մոտեցել է սովխոզայինին: Սակայն սխալ կլինեք եզրակացնել, որ վարձատրության ասպարեզում համահարթման պրոբլեմը լուծվել է համապատասխան չափերով: Գյուղատնտեսական առանձին գոտիների և շրջանների կոլտնտեսությունների միջև դեռևս գոյություն ունեն աշխատանքի վարձատրության (ինչպես նաև վերարտադրության մյուս պայմանների, օրինակ, շահութաբերության) այնպիսի զգալի տարբերություններ, որոնք գոյություն չունեն սովխոզային սեկտորում:

Աշխատանքի վարձատրության և զբաղվածության մակարդակի այն տարբերությունները, որ այսօր առկա են գյուղատնտեսական ձեռնարկություններում, իրենց հերթին սկիզբ են առնում այն տարբերություններից, որոնք գոյություն ունեն սոցիալիստական սեփականության պետական և կոլտնտեսային ձևերի միջև: Պետությունը երաշխավորում է իր ձեռնարկությունների (սովյալ դեպքում սովխոզների) բանվորների ոչ միայն աշխատանքի վարձատրության որոշակի կայուն չափեր, այլև զբաղվածության որոշակի մակարդակ: Նույնը չի կարելի ասել կոլտնտեսությունների մասին:

Այսօր (նաև առաջներում) սովխոզային բանվորների վարձատրության մակարդակը կախված է ամբողջ սովխոզային սեկտորի աշխատանքի արտադրողականության մակարդակից, իսկ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը՝ սովյալ տնտեսության մեջ նրա արտադրողականության մակարդակից: Դրանում է աշխատանքի վարձատրության համակարգերի էական տարբերությունը կոլտնտեսություններում և սովխոզներում, չնայած վարձատրության միջին մակարդակը և նրա արտաքին ձևերը կոլտնտեսություններում ու սովխոզներում մերձեցել են: Անժխտելի է, որ այսօր (հատկապես 1966 թ. հետո աշխատանքի երաշխիքային վարձատրության համակարգի կիրառման կապակցությամբ) աշխատանքի վարձատրության սիստեմը կոլտնտեսություններում ավելի քան երբևիցե ենթարկվում է պետության կարգավորիչ ազդեցությանը, որի նշանակությունը, սակայն, չի կարելի չափազանցել:

Կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատանքի վարձատրության կատարելագործման և մերձեցման համար վճռական նշանակություն ունի կոլտնտեսային և սովխոզային էկոնոմիկայի հետագա վերելքը: Գյուղատնտեսական (սովխոզային) բանվորի և կոլտնտեսականի աշխատանքի վարձատրության ընդհանրության աստիճանը կախված է նյութական բարիքների արտադրության և բաշխման հանրայնացման աստիճանից: Հասկանալի է, որ սո-

ցիալ-տնտեսական այս էական տարբերությունները շին կարող հաղթահարվել վարչարարական-իրավական կարգավորման միջոցով և ավելի վաղ, քան կըստեղծվեն դրա համար անհրաժեշտ նյութական նախադրյալներ:

Մինչև վերջերս տնտեսագիտական գրականության մեջ շատ քիչ էր արծարծվում սովխոզային առադրության շահութաբեռության հարցը և դա հասկանալի է, քանի որ վերջինս գրեթե ամեն քայլափոխում վնասով էր ծածկվում: Վերջին տարիներին սովխոզներում տնտհաշվարկի իրագործման, ինչպես նաև սովխոզային արտադրանքի մթերման գների կատարելագործման կապակցությամբ սովխոզների շահույթները զգալիորեն ավելացան, ուստի և բարձրացավ սովխոզային արտադրության շահութաբեռությունը: Այս տեսակետից ևս նկատվում է կոլտնտեսային և սովխոզային արտադրության պայմանների զգալի մերձեցում: Ա. Նմելյանովի տվյալներով, 1970—1972 թթ. բուսաբուծության ճյուղերի միջին շահութաբեռությունը (որը բնորոշվում է զուտ եկամուտի և ինքնարժեքի հարաբերությամբ) երկրի կոլտնտեսություններում կազմել է 49, իսկ սովխոզներում՝ 46%, Անասնապահության շահութաբեռությունը կոլտնտեսություններում կազմել է 4%, իսկ սովխոզներում այդ ճյուղը վնասով էր աշխատում: Ընդհանուր առմամբ հանրային տնտեսության շահութաբեռությունը կոլտնտեսություններում կազմում էր 29, իսկ սովխոզներում՝ 24%⁵:

Շահույթների բաշխման ասպարեզում սկզբունքային տեղաշարժեր կատարվեցին նաև տնտհաշվարկի անցած սովխոզներում: Արտադրության զարգացման ֆինանսավորման աղբյուրների վերլուծությունը վկայում է, որ այս խումբ սովխոզների սեփական միջոցները կազմում են բոլոր կապիտալ ներդրումների 60%-ը, երկարաժամկետ բանկային վարկերը՝ 22%-ը և վերջապես բյուջետային միջոցները՝ ընդամենը 13%-ը: Մինչդեռ այն սովխոզներում, որոնք դեռևս չեն անցել տնտհաշվարկի, կապիտալ ներդրումների հիմնական մասը բաժին է ընկնում բյուջետային միջոցներին, իսկ բանկային վարկը կազմում է ընդամենը 13%⁶:

Այս թվերը վկայում են սովխոզային արտադրության զարգացման նոր էտապի մասին: Այն բնորոշվում է նրանով, որ պետական բյուջետային անվերադարձ ֆինանսավորումը աստիճանաբար փոխարինվում է (կամ իր տեղն է զիջում) սովխոզների սեփական միջոցների ներդրումներին և այս նպատակով օգտագործվող բանկային վարկին: Վերջինիս դերի ուժեղացումը միևնույն ժամանակ նշանակում է նյութական պատասխանատվության զգալի բարձրացում՝ փոխառու միջոցների օգտագործման և վերադարձի համար: Տեղի է ունենում որոշակի հոգեբանական բեկում եղած միջոցների օգտագործման նկատմամբ: Այդ բեկման նշանակությունը չի կարելի թերագնահատել, եթե նկատի առնենք, որ վարչարարական կարգավորման և մանր խնամակալության պրակտիկայի երկար տարիները քիչ տեղ էին թողնում սովխոզային արտադրության ղեկավարների ինքնուրույնության և նախաձեռնության համար:

Տնտհաշվարկի և շահութաբեռության սկզբունքների հետևողական կիրառումը պահանջում է սովխոզների շահույթների բաշխման հետագա կատարելագործում: Հայտնի է, օրինակ, որ ներկայումս շահույթի զգալի մասը, այսպես կոչված ազատ շահույթի մնացորդի ձևով գանձվում է պետական բյուջե: Միաժամանակ, դրա հետևանքով հաճախ գոյացող միջոցների պակասը սովխոզ-

⁵ «Экономические науки», 1974, № 11, стр. 102.

⁶ «Экономика сельского хозяйства», 1973, № 8, стр. 16.

ները ստիպված են լինում լրացնելու պետքանկի երկարատև վարկերի հաշվին. ընդ որում՝ վերջինիս գումարը շատ հաճախ գերազանցում է տնտեսություններից գանձվող շահույթի գումարին: Դա իհարկե նորմալ համարել չի կարելի: Հավանաբար հասունացել է այսպես կոչված շահույթի ազատ մնացորդի դանձման կարգի կատարելագործման հարցը: Նպատակահարմար է, որ շահույթի ազատ մնացորդի գանձումը կատարվի միայն այն դեպքում, երբ տնտեսությունում իրացվող շահույթները ապահովում են շահութաբերության անհրաժեշտ (օպտիմալ) նորմա: Տեղին է նշել, որ արտադրական ֆոնդերի համար սահմանված վճարը ներկայումս գանձվում է միայն այն տնտեսություններից, որոնց շահութաբերության մակարդակը կազմում է ոչ պակաս 25%: Տրամաբանական կլիներ, ելնելով դրանից, շահույթի այսպես կոչված ազատ մնացորդը գանձել պետական բյուջե միայն այն դեպքում, երբ տնտեսության շահութաբերությունը կազմում է առնվազն 25—30%:

Օպտիմալ շահութաբերության հարցը սիստեմատիկաբար քննվում է տնտեսագիտական գրականության մեջ, և կարելի է ասել, որ դարձել է նրա ավանդական հարցերից մեկը: Որպես կանոն, այն քննվում է կոլտնտեսային արտադրության առումով: Մինչդեռ վերն ասվածից պարզ է, որ նոր պայմաններում հիշյալ պրոբլեմը միանգամայն առօրյա նշանակություն է ստանում նաև սովխոզային արտադրության համար:

Տնտհաշվարկի իրագործման կարևորագույն պայմանն է արտադրության ու ծախսերի եռգնումը և շահութաբերության որոշակի անհրաժեշտ մակարդակի ասահովումը: Խոսքը շահութաբերության այնպիսի մակարդակի մասին է, որի պայմաններում տվյալ տնտեսությունը (նյութը, միավորումը) կարող է զարգանալ սեփական կուտակումների հաշվին⁷:

Ինչպիսի՞ն է կոլտնտեսային և սովխոզային արտադրության անհրաժեշտ (օպտիմալ) շահութաբերությունը: Սովետական մի շարք տնտեսագետների տվյալներով հանրային տնտեսության շահութաբերության օպտիմալ նորման (զուտ եկամտի ճարաբերությունը արտադրության ծախսերին), որն անհրաժեշտ է ընդլայնված վերարտադրության համար, կազմում է 45—50%:

Նույնը հաստատում է նաև Երկրի սովխոզներում արտադրական կուտակումների վերաբերյալ տվյալների վերլուծությունը (տե՛ս աղյուսակ 2): Սոցիալիստական տնտեսության երկու ձևերի (կոլտնտեսային և սովխոզային) մերձեցումը ենթադրում է գոյություն ունեցող զգալի տարբերությունների հաղթահարում ոչ միայն աշխատուժի վերարտադրության, այլև արտադրության շահութաբերության և կուտակումների ասպարեզում:

Այժմ բերենք մի քանի հիմնական տվյալներ, որոնք քննվեցում են մեր հանրապետության կոլտնտեսությունների և սովխոզների արտադրության ծախսերի, իրացված դրամական միջոցների, կատարված կուտակումների և շահութաբերության մակարդակը (աղյուսակ 2):

⁷ Տնտեսագիտական որոշ ձեռնարկներում տնտհաշվարկի էությունը հաճախ բնութագրվում է որպես արտադրության ծախսերի սոսկ նստումը և շահութաբերության ապահովում, անկախ այն բանից, թե ինչպիսին է այդ շահութաբերության մակարդակը (տե՛ս, օրինակ, «Политическая экономия социализма», М., 1970, стр. 317—318): Տնտհաշվարկի այդպիսի բնութագրման նետ չի կարելի համաձայնվել այն պարզ պատճառով, որ տնտհաշվարկի իրագործումը հնարավոր է միայն շահութաբերության որոշակի (օպտիմալ) մակարդակի ապահովման դեպքում:

ՀՍՍՀ սովխոզների և կոլտնտեսությունների ծախսերի հոգնումը և կուտակումները⁸

Ցուցանիշներ	Միավորը	Սովխոզ-ներ	Կոլտն-տեսու-թյուններ	Կոլտնտեսու-թյունները սովխոզների նկատմամբ տոկոս
1 Իրացված արտադրանքի լրիվ ինքնարժեքը	մլն. ռուբ.	159,7	168,0	105,2
2 Իրացված գումարը	մլն. ռուբ.	167,7	180,0	107,3
3 Զուտ եկամուտ	մլն. ռուբ.	8,0	12,0	150,0
4 Ընդամենը կապիտալ ներդրումներ	մլն. ռուբ.	82,6	26,2	31,7
5 Զուտ կապիտալ ներդրումներ	մլն. ռուբ.	72,2	15,0	20,8
6 Կապիտալ ներդրումներ պետական բյուջեի հաշվին	մլն. ռուբ.	63,3	—	—
7 Ներդրումներ պետականից ստացված երկա-րատե վարկերի հաշվին	մլն. ռուբ.	2,5	12,0	480,0
8 Երկարատե վարկերի տեսակարար կշիռը	տոկոս	3,5	80,0	—
9 Զուտ կապիտալ ներդրումներ 100 ռուբ. ծախ-սերի (ինքնարժեքի) հաշվով	տոկոս	45,2	8,9	19,7
10 Նույնը մեկ մարդ-օրվա հաշվով	ռուբ.	3,33	1,16	34,8

Աղյուսակը ցույց է տալիս, որ կուտակումների աղբյուրները կոլտնտեսու-թյուններում և սովխոզներում խիստ տարբերվում են: Կոլտնտեսություններում կուտակումների հիմնական աղբյուր են սեփական եկամուտները և պետաբան-կից վերցրած երկարատե վարկերը, որոնք ենթակա են վերադարձման, այն էլ տոկոսով: Մինչդեռ սովխոզների կուտակումների հիմնական աղբյուրը (88%) եղել է պետական բյուջեից կատարվող ֆինանսավորումը, իսկ սեփա-կան միջոցները և բանկային վարկերը՝ շնչին դեր են խաղում նրանց կուտա-կումների մեջ: Աչքի է ընկնում այն ակնհայտ հակասությունը, որ կոլտնտե-սությունները իրացրել են 1,5 անգամ ավելի շատ զուտ եկամուտ, քան սով-խոզները, սակայն միաժամանակ ավելի քան 3 անգամ զիջում են վերջինե-րին կապիտալ ներդրումների ընդհանուր գումարով, իսկ զուտ կապիտալ ներ-դրումների գծով այդ խզումն ավելի մեծ է: Ինչպես երևում է աղյուսակի նա-խավերջին տողից, զուտ կապիտալ ներդրումների, այսինքն ըստ էության կուտակումների չափը (նրանց հարաբերությունը ծախսերին) սովխոզներում շուրջ 5 անգամ ավելի բարձր է, քան կոլտնտեսություններում (45,2 և 8,9%):

Այսպիսով, սովխոզներում կուտակումների մակարդակը ներկայումս որոշ-վում է ոչ թե նրանց եկամուտների մեծությամբ, այլ տնտեսության զարգաց-ման օբյեկտիվ պահանջներով և երաշխավորվում է պետության կողմից, ճիշտ այնպես, ինչպես վերջինս երաշխավորում է նաև վարձատրության չափերը:

Նկնելով ասածից, միանգամայն իրավացի կլինի սովխոզային սեկտորի կուտակման չափը (որը հավասար է 45%-ի) ընդունել իբրև հանրային տնտե-սության կուտակման օպտիմալ չափ, որն այսօր երաշխավորված է գյուղա-տնտեսությունների պետական սեկտորում:

⁸ Հաշվարկը կատարված է հանրապետության սովխոզների և կոլտնտեսությունների 1973 թ. ամսփոփ տարեկան հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Հայտնի է, որ այժմ 15%-ից ցածր շահութաբերություն ունեցող կուտընտեսությունները պետությանը եկամտահարկ չեն վճարում: Հետաքրքիր է նշել, որ վերջին տարիներին այդ շարքին են պատկանում մեր հանրապետության կուտնտեսությունների շուրջ 3/4-ը (1973 թ. 279-ը): Ընդ որում, նույն տարում 135 կուտնտեսություններ չկարողացան որևէ հատկացում կատարել կուտակման ֆոնդերին: Այնուամենայնիվ, տնտեսապես թույլ կուտնտեսությունների մյուս կեսը որոշ հատկացումներ կատարել էր կուտակման նպատակով, սակայն բանկային ժամկետանց վարկերի և պարտքերի հաշվին: Տարեցտարի կուտակվող այդ պարտքերը ժամանակ առ ժամանակ դուրս են գրվում պետության կողմից, նկատի առնելով հիշյալ տնտեսությունների բացարձակ անվճարունակությունը: Այսպես, օրինակ, վերջերս ՍՍՀՄ կառավարության որոշմամբ, դուրս գրվեցին մեր հանրապետության կուտնտեսությունների 55 միլիոն ռ. ժամկետանց պարտքերը⁹:

Տնտեսապես թույլ կուտնտեսությունների պրոբլեմն առաջ է բերել շատ կուտնտեսությունների սովխոզացման ակնհայտ տենդենց: Այսպես, 1960—1974 թթ. մեր հանրապետության կուտնտեսությունների թիվը կրճատվել է 760-ից մինչև 374-ի, իսկ սովխոզների թիվը նույն տարիներին ավելացել է 83-ից մինչև 354: Այսպիսով, մոտ առաջիկայում կուտնտեսությունների և սովխոզների թիվը հանրապետությունում հավանաբար կհավասարվի, իսկ հողատարածությունների առումով սովխոզները արդեն այսօր գերակշռող դեր են խաղում: Եթե չհաշվենք Ղաղախստանը՝ խոպանի սովխոզների նրա հրակայական զանգվածով, ապա Հայաստանն այսօր ՍՍՀՄ-ում առաջին տեղն է գրավում գյուղատնտեսական ձեռնարկությունների ընդհանուր թվի մեջ՝ սովխոզների տեսակարար կշռով: Քանի որ սովխոզացման են ենթարկվում տնտեսապես թույլ կուտնտեսությունները, ապա և հասկանալի է, որ դա չէր կարող բացասաբար չանդադառնալ սովխոզային սեկտորի տնտեսական ցուցանիշների վրա: Բավական է ասել, որ այսօր հանրապետության սովխոզների միայն 1/10 մասն է աշխատում տնտհաշվարկի սկզբունքով: Մինչդեռ պահանջում էր, որ երկրի բոլոր սովխոզներն արդեն 1975 թ. վերջին աշխատեին հիշյալ սկզբունքով: Իսկ տնտհաշվարկի ռեժիմով աշխատելը պահանջում է ամենից առաջ լուծել կուտակումների սեփական աղբյուրի ստեղծման պրոբլեմն այն հաշվով, որպեսզի համապատասխանություն ստեղծվի յուրաքանչյուր տնտեսության ծախսերի և եկամուտների միջև:

Այսպիսով կուտնտեսությունների սովխոզացումը դեռևս բնավ չի լուծում գյուղատնտեսական ձեռնարկությունների շահութաբերության և նրանցում տնտհաշվարկի կիրառման պրոբլեմը: Այն միայն վերարտադրում է այդ պրոբլեմն այլ ձևով: Կուտնտեսությունների սովխոզացումն առավել ևս չի կարելի նույնացնել կուտնտեսային արտադրության և սեփականության իրական հանրայնացման հետ: Դա բացատրվում է նրանով, որ այդ պրոցեսներից առաջինը իրավական-օրենսդրական ակտի արդյունք է, մինչդեռ երկրորդը, այսինքն՝ իրական հանրայնացումը, ենթադրում է էական տնտեսական տեղաշարժերի

⁹ Այս առումով չի կարելի չդարձնալ այն հանդիմանությունների առթիվ, որոնք հաճախ արվում են այն կուտնտեսությունների հասցեին, որոնք կուտակումներ չեն կատարում անբաժանելի ֆոնդերին: Մինչդեռ ուշադրության արժանի և իրավաբան պրոբլեմն այն է, որ ոչ պակաս քանի կուտնտեսություններ կուտակումներ կառարարում են շունեկալով դրա համար անհրաժեշտ աղբյուր՝ զուտ եկամուտ:

իրականացում հանրային արտադրության զարգացման և կազմակերպման աստիճանի, ինչպես նաև նյութական բարիքների բաշխման ասպարեզում: Հասկանալի է, որ վերջինիս իրականացումը շատ ավելի բարդ խնդիր է և սեփականության ձևերի փոփոխման խնդրի համեմատությամբ շատ ավելի երկար ժամանակ է պահանջում:

ОБ УСЛОВИЯХ ВЫРАВНИВАНИЯ НАКОПЛЕНИЯ И ПОТРЕБЛЕНИЯ МЕЖДУ КОЛХОЗАМИ И СОВХОЗАМИ

Н. М. МАНАСЕРЯН

Р е з ю м е

Важнейшим аспектом проблемы выравнивания экономических условий воспроизводства в сельском хозяйстве является выравнивание оплаты труда, рентабельности и накоплений в колхозах и совхозах. Анализ статистических данных свидетельствует о том, что вместе с общим повышением уровня оплаты труда в колхозах и совхозах за последние 10—15 лет произошло значительное сокращение существующего в этом деле разрыва между ними.

При этом имело место некоторое незначительное снижение годовой занятости колхозников и работников совхозов.

Что касается рентабельности и накоплений колхозного сектора нашей республики, то в этом деле сколь-нибудь существенных сдвигов не произошло. Основным источником накоплений колхозов по-прежнему являются собственные средства (чистый доход) и долгосрочный банковский кредит, а в совхозах таковым все еще является бюджетное финансирование. В этой связи перевод многих малорентабельных (слабых) колхозов в совхозы не решает проблем эффективности общественного хозяйства, а лишь воспроизводит их в другой форме. Для решения этих проблем необходимо выявить и реализовать внутренние резервы развития экономики как в колхозах, так и в совхозах на основе укрепления технического базиса, развития хозяйственной самостоятельности и создания материальных стимулов.